

Գիմիտրի Ն. Սարգսյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ՔԻՔԼԻԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏԻ ԼԵՌՆԵՐԸ» ԸՍՏ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ\*

**Աստվածաշնչի** սեմական ծագում ունեցող եբրայերեն բնագրում Նոյի տապանը հանգրվանող լեռների մասին պահպանվել է հետևյալ ավանդությունը. «Եվ վերադառնում էին ջրերը երկրից՝ գալով և վերադառնալով, և հանգստացել էին ջրերը հարյուր հիսուն օրը վերջանալիս: Եվ կանգնեց տապանը յոթերորդ ամսին, ամսվա տասնյոթերորդ օրը՝ *‘RRṬ-*ի լեռների վրա»<sup>1</sup>

**Աստվածաշնչի** հունարեն թարգմանության (*Septuaginta*)<sup>2</sup> մեջ հեղինակները եբրայերեն բնագրի «*‘RRṬ*» բաղաձայնական արմատի ամեն մի բաղաձայնից առաջ դրել են հունարեն այբուբենի առաջին ձայնավոր տառը, ստացել *Ararat* «Արարատ» և առանց թարգմանելու համարել են այն լեռների անունը, որոնց վրա համաշխարհային ջրհեղեղի ժամանակ հանգրվանել է Նոյի տապանը՝ *εἶπα τα ὄρητα Ἀραράτ* «Արարատի լեռների վրա»:

**Աստվածաշնչի** հայերեն թարգմանությունում, որը կատարվել է հունարենի հիման վրա, հիշյալ արտահայտությունը գրաբարով հնչել է այսպես. «Ի լերինս Արարատայ»<sup>3</sup>: Ակներև է, որ ինչպես հունարեն, այնպես էլ հայերեն թարգմանությունները՝ *‘RRṬ* բաղաձայնական արմատը օգտագործել են *Ararat* «Արարատ» իմաստով, որն իբր՝ եղել է լեռների անուն:

Հետազոտողներից ինչպես է. Շրադերը<sup>4</sup>, այնպես էլ Ի. Մ. Դյակոնովը<sup>5</sup> այն կարծիքն են հայտնել, որ **Աստվածաշնչի** սեմական ծագում ունեցող եբրայերեն բնագրի նոյյան ջրհեղեղի լեզնեղում հիշատակված *‘RRṬ* բաղաձայնական արմատը պետք է կարդալ *Urartu* «Ուրարտու»:

Այս *‘RRṬ=Urartu* «Ուրարտու» անունով է կոչվել սեմական ծագում ունեցող՝ ասսուրերեն լեզվով գրված սեպագիր արձանագրություններում մ.թ.ա. IX դարից Հայկական լեռնաշխարհում քաղաքական ասպարեզ եկած պետությունը<sup>6</sup>: Սեմական ծագում ունեցող Ուրարտու անունով է կոչվել նաև այն երկիրը, որտեղ հանդես է եկել հիշյալ պետությունը:

\* Հիշեցնում ենք, որ «Քննարկումներ» բաժնում տեղ գտած հոդվածները հնարավորություն են տալիս վիճելի հարցերի շուրջ արտահայտել տեսակետներ, որոնք միշտ չէ, որ վերջնականապես ապացուցվել են գիտության կողմից: Խնդիր: Հոդվածն ընդունվել է տպագրության 15.04.2011:

1 Священные книги (Ветхаго завета, для употребления евреям), т. I, Вена, 1877. Книга бытия (Пятикнижие Моисеева), гл. VII, с. 11, стк. 3-4; см. также И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту (АВВИУ)-Вестник-древней истории (далее-ВДИ), 1951, N 2,3,4, текст N 86 (2).

2 St' u B. B. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, с. 3.

3 Աստվածաշունչը Հին կտակարանաց. Վենետիկ, 1889, գլ. VIII, տող 3-4:

4 St' u E. Schrader, Keilnsschriften und Geschichtsforschungen. Giesen, 1878, S. 30.

5 St' u И. М. Дьяконов, Գլ. աշխ., ժանր. I հմմտ. N. 62, ժանր. I (հմմտ. N. 62, ժանր 6; N 83, ժանր 7).

6 St' u И. М. Дьяконов, АВВИУ, N 24 и прим 4; 27-33 и пр.

Լատինացիները, ի տարբերություն հույների, Աստվածաշնչի լատիներեն թարգմանության (Vulgata)<sup>7</sup> մեջ ջրհեղեղի ավանդության վերոհիշյալ հատվածի ‘RRȚ=Urartu «Ուրարտու» երկրանունը թարգմանել են Արմենիա անունով, որի լեռների վրա էլ հանգրվանել է Նոյի տապանը համաշխարհային ջրհեղեղի ժամանակ (super montes Armentae «Արմենիայի լեռների վրա»): Այստեղ Արմենիան երկրի անուն է, որի լեռների վրա, ըստ Աստվածաշնչի լեզենդի, հանգրվանել է Նոյի տապանը: Ուրարտու երկիրը և Արմենիա երկիրը, ըստ հիշյալ փաստերի, նույն տարածքն է: Տարբերությունն այն է, որ այդ երկիրը սեմական ծագում ունեցող եբրայերեն լեզվով կոչվել է Ուրարտու, իսկ լատիներենով, որն ուներ հնդեվրոպական ծագում, կոչվել է Արմենիա:

Ուրարտու երկրանունը որպես Արմենիա երկրանուն թարգմանելու այս տեսությունը հիմնավորվում է Պարսկաստանի թագավոր Դարեհ 1-ի (522-485)<sup>8</sup> «Բեհիստունյան» և «Նակչի-Ռուսթամյան» եռալեզու (պարսկերեն, էլամերեն, բաբելոներեն) սեպագիր արձանագրությունների տվյալներով, որոնց համաձայն՝ սեմական ծագում ունեցող բաբելոներեն տարբերակի Ուրաշտու (Ուրարտու) երկրի անունը և նրա ուրաշտներ (ուրարտներ) բնակիչների անունը հնդիրանական ծագում ունեցող պարսկերեն և էլամերեն լեզուներով թարգմանվել է որպես Արմինա (Արմենիա) երկրանուն և արմիններ (արմեններ) բնակիչների անուն:

Այս համեմատության շնորհիվ պարզ է դառնում, որ սեմական ծագում ունեցող լեզուներով գրված Ուրարտու (Ուրաշտու) երկիրը և նրա ուրարտներ (ուրաշտներ) բնակիչները հնդեվրոպական և հնդիրանական ծագում ունեցող լեզուներով կոչվել են Արմենիա (Արմինա) և արմեններ (արմիններ): Ուստի վստահորեն կարելի է ասել, որ Աստվածաշնչում հիշատակված Նոյի տապանը համաշխարհային ջրհեղեղի ժամանակ հանգրվան է գտել Ուրարտու կամ Արմենիա (հմմտ. Հայք, Հայաստան, նրա բնակիչները՝ արմեններ կամ հայեր) երկրի լեռների վրա:

Աստվածաշնչի ջրհեղեղի ավանդությունում հիշատակված ‘RRȚ-ն ոչ թե լեռան անունն է, այլ երկրի՝ Ուրարտու կամ Արմենիա երկրի, որի լեռների վրա էլ հանգրվանել է Նոյի տապանը (խոսքը այդ երկրի ոչ թե մի լեռան մասին է, այլ ընդհանուր առմամբ լեռների մասին, քանի որ լեռ բառը հոգնակի թվով է («լեռինս»):

Ինչպես հայերը, այնպես էլ ուրիշ ժողովուրդները համարելով, որ ջրհեղեղի նոյյան ավանդության գործողությունները կապված են Հայկական լեռնաշխարհի հետ, իրենք էլ հյուսել են ավանդություններ, որոնց միջոցով ձգտել են բացահայտել, թե Հայկական լեռնաշխարհի ո՞ր լեռան վրա է հանգրվանել Նոյի տապանը: Հայ ժողովուրդը միասնական կարծիք չի արտահայտել տապանակիր լեռան մասին: Պատճառն այն է, որ Հայաստանի տարբեր գավառներում ապրող բնակիչները, ովքեր հյուսել են նման ավանդություններ, ձգտել են իրենց գավառի այս կամ այն բարձր լեռը դիտել որպես տապանակիր:

Աստվածաշնչի ջրհեղեղի ավանդության հարցերով զբաղվող հետազոտողները նույնպես փորձել են բացահայտել, թե որ լեռան վրա է հանգրվանել Նոյի տապանը: Նրանք այդ հարցում ելակետ են ընտրել հայկական ժողովրդական ավանդությունները: Մինչև Աստվածաշնչի հայերեն թարգմանվելը հայ ժողովուրդը զանազան ճանապարհներով ծանոթ է եղել ջրհեղեղի լեզենդին և դրա հիման վրա հյուսել է իր ավանդությունները՝ կապված տապանակիր լեռան հետ: Նման մի ավանդություն, որը հյուսել են Կորդվաց գավառի բնակիչները, հասել է Բերոսոս

7 Стѣ Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), с. 33.  
 8 Стѣ F. W. Weissbach, Die Keilinschriften der Achameniden, Leipzig, 1911, S. 8-79, 86-97.

Քաղղեացուն (մ.թ.ա. 350) և հետագայում էլ տեղ գտել I դարի պատմիչ Հովսեփոս Փլավիոսի աշխատությունում. «Ասվում է, թե մինչև հիմա նավի մի մասը գտնվում է Արմենիայում, Կորդվաց լեռների մոտ, և որ ոմանք նրա վրայից պոկելով կուպրի կտորներ են բերում, և մարդիկ դրանք կրում են իրենց վրա իբրև հուռուք»<sup>9</sup>: Թեև այստեղ չի հիշատակվում տապանակիր լեռան անունը, բայց ավանդության սովյալներից հասկանալի է, որ Կորդվաց գավառի բնակիչները դեռևս Բերոսոս Քաղղեացու և Հովսեփոս Փլավիոսի ժամանակից այն միտքն են առաջադրել, թե տապանակիր լեռը գտնվել է իրենց գավառում:

Եթե հիշյալ ավանդությունում բացակայում է տապանակիր լեռան անունը, ապա մյուսներում, որոնք հյուսվել են Աստվածաշունչը հայերեն թարգմանելուց հետո, Կորդվաց գավառի բնակիչները, խոսելով այդ լեռան մասին, արդեն հիշատակում են նրա անունը: Նման ավանդություններից մեկը, որը Հասել է Փավստոս Բուզանդին, հայտնում է, թե Նոյի տապանը հանգրվանել է «Ի լեռն Սարարադայ ի սահմանս Արարատեան տէրութեան ի գաւառն Կորդուաց»<sup>10</sup>: Ինչպես առաջարկում են Մ. Ֆրիդրիխը<sup>11</sup> և Ստ. Մալխասյանը<sup>12</sup>, սույն ավանդության «ի լեռն Սարարադայ» արտահայտությունը հին ժամանակվա կից գրության համաձայն՝ բնագրում եղել է «իլերինսարարադայ», իսկ գրիչը փոխանակ բառաբաժանելու «ի լերինս Արարադայ», ինչպես Աստվածաշունչում է, բառաբաժանել է «ի լեռն Սարարադայ»: Հաշվի առնելով Մ. Ֆրիդրիխի և Ստ. Մալխասյանցի կարծիքը, կարելի է ասել, որ Փավստոս Բուզանդին հասած Կորդվաց գավառի այս ավանդությունը հյուսելիս տեղացիները ընդօրինակել են Աստվածաշունչի համապատասխան լեզուները, բայց Աստվածաշունչի «ի լերինս Արարատայ» արտահայտության «լերինս» և բառի վերջում դրված հայերենի հոգնակի թվի հայցական հոլովի «ս» ցուցիչը անջատել են և ավելացրել «Արարադայ» բառի սկզբի մասի վրա, որպեսզի ցույց տան, թե «լեռ» բառը եզակի թվով պետք է լինի, այլ ոչ թե հոգնակի, իսկ Նոյի տապանն էլ հանգրվանել է Կորդվաց գավառի Սարարադ լեռան վրա, այլ ոչ թե, ընդհանուր առմամբ՝ Արարատի կամ Ուրարտուի (հմմտ. Արմենիայի) տերության լեռների վրա:

Կորդվաց գավառի մեկ այլ ավանդություն, որը հյուսվել է Փավստոս Բուզանդին հասած վերոհիշյալ ավանդության ազդեցության տակ, տեղեկություններ է հաղորդում այն մասին, թե Նոյի տապանը հանգրվանել է Կորդվաց գավառի Մադուփիս լեռան վրա, որը ջրհեղեղի ժամանակից սկսած՝ Սարարադի փոխարեն կոչվել է Մադուփ. «...Վասն այսոր լերին ասի յԱսորոց, թէ ի նուազել ջուրցն հեղեղաց՝ եհաս տապանն ի գլուխ լերինն՝ որ է Մարարադայ. և ընդ մէջ անցեալ Մոդցածուկն արգելու ըզնավն. և ասաց Նոյ որդոցն իւրոց՝ Ո, Աադուփ, այսինքն թե Մոդցածուկն դիպեցաւ նախս»<sup>13</sup>: Այս ավանդությունը, որը թվում է, թե ի դեմս Մադուփի լեռան կրում է տեղական բնույթ, իրականում, ինչպես ասվեց վերևում, առաջ է եկել Աստվածաշունչի համապատասխան լեզունդի ընդօրինակումից:

9 J. Flavius, The Antiquities of the Jews. Vol. I, London. 1881, book I, chap. III, p. 20 (93), Հովսեփոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, Եր., 1976, էջ 55 (93):

10 Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Եր., 1968, գլ. 10, էջ 59:

11 Տե՛ս M. Friedrich, Ararat und Msis (Studien zur Armenischen Alterthumskunde und literatur). Heidelberg, 1901, S. 84.

12 Տե՛ս Ստ. Մալխասյանց, Ուսումնասիրություն Փավստոս Բուզանդի պատմության, Սանկտ Պետերբուրգ, 1896, էջ 125: Տե՛ս նաև նրա՝ «Փավստոս Բուզանդ», Պատմություն Հայոց (ներածություն, թարգմանություն, ծանոթագրություններ), Եր., 1947, էջ 251:

13 Փավստոս Բուզանդ, Աշխ. ժամոթ. N 32:

Տապանակիր լեռան հարցով զբաղվող հետազոտողներից Հ. Գելցերը<sup>14</sup>, Մ. Աբեդյանը<sup>15</sup> և Ս. Երեմյանը տապանակիր լեռ են համարել Կորդվաց գավառում գտնվող Ջուդի-դաղը, որը սեպագիր արձանագրություններում հիշատակվել է Նիբուր անունով: Ընդ որում, Ս. Երեմյանը դիմել է սեպագիր արձանագրություններին, հաստատելու համար, թե Ջուդի-դաղը կամ Նիբուրը, զուգահեռաբար, դեռևս սեպագիր ժամանակաշրջանից, երբ դեռ չէր կազմավորվել Աստվածաշունչը, կոչվել է Արարատ անունով. «Միջագետքում և Հայաստանում, որտեղ շատ հնուց հայտնի էր ջրհեղեղի ավանդությունը, անկախ Աստվածաշունչից, Նոյի տապանի սարը համարում էին այժմյան Ջուդի-դաղ գագաթը Կորդվաց լեռներում, որը գտնվում է այժմյան Իրաքից Հյուսիս` Թուրքիայի սահմաններում և պատմական Հայաստանի Կորճայք նահանգում: Այս գագաթը մ.թ.ա. VIII դարում ասորեստանյան մի արձանագրության մեջ կոչվում է «Արարտու», որ նույն «Ուրարտու» անվան տարբերակն է: Որ այդ սարի հետ է կապվել ջրհեղեղի ավանդությունը, երևում է նաև վաղ շրջանի սիրիական և հայկական աղբյուրների վկայություններից»<sup>16</sup>:

Մի այլ առիթով Ս. Երեմյանը գրում է. «Արարաղ լեռան (2089) Գ-5-ուրարտերեն Arartu, ասսուրա-բաբելական Nibur, հուն. *Niβapoζ*, արաբ. *Nabal Gaūdi*, այժմ Ջուդի-դաղ: Ըստ տեղական ավանդության, այդ լեռան վրա ջրհեղեղից հետո կանգ է առել Նոյի տապանը»<sup>17</sup>:

Քիչ հետո կհանդգվենք, որ ասսուրա-բաբելոներեն սեպագիր տեքստերում հիշատակվող այն լեռը, որի մասին ասում է Ս. Երեմյանը, կոչվել է ոչ թե «Արարտու», այլ Արարդի (տարբերակ Արրեդի): Այդ լեռան անունը երբեք էլ «Ուրարտու» անվան տարբերակը չի եղել: Ինչ վերաբերում է ուրարտերեն սեպագիր տեքստերին, ապա նրանցում ևս «Արարտու» անունով լեռ չի հիշատակվել, որի մասին Ս. Երեմյանը ասում է, թե իբր՝ նրա անունը եղել է ասսուրա-բաբելոներեն տեքստերում հիշատակված Նիբուր լեռան անվան ուրարտերեն տարբերակը:

Սեպագիր արձանագրությունների փաստերը վկայում են, որ Արարդի (Արրեդի) լեռը տարբերվել է Նիբուրից, և ճիշտ չէ Ս. Երեմյանը, որ Նիբուրի (հմմտ. Ջուդի-դաղ) հետ է համադրել Արարդի (Արրեդի) լեռը:

Նիբուր և Արարդի (Արրեդի) լեռների տարբերության մասին տեղեկություններ են պահպանել Ասորեստանի թագավոր Աշշուրնաձիրապալ II-ի (884/3-859) սեպագիր տեքստերը: Այդ լեռներից Նիբուրի վերաբերյալ տեղեկությունը հետևյալն է.

istū<sup>URU</sup>Ni-nu-a at-tu-muš ana alani<sup>MES</sup>-ni ša šep<sup>GEN</sup>Ni-pur u<sup>GEN</sup>pa-ea-ta šade<sup>MES</sup> dan-nuti<sup>MES</sup>...istu alani<sup>MES</sup>-ni ša šep<sup>GEN</sup>Ni-pur<sup>GEN</sup>pa-ea-te at-tu-muš<sup>ID</sup>Idiglat e-te-bir ana<sup>KUR</sup>Kat-mu-hi aq-te-rib<sup>18</sup>.

«Ես դուրս ելա Նինվեից և հիրավի գնացի այն բնակավայրերի վրա, որոնք տարածված էին Նիբուր և Պածաթե հսկա լեռների ստորոտում... Ես դուրս ելա Նիբուր և Պածաթե լեռների ստորոտում գտնվող բնակավայրերից, անցկացա Տիգրիսի վրայով և մտա Քաթմուլիսի երկիրը»<sup>19</sup>: Ակներև է, որ ըստ կոնտեքստի,

14 Տե՛ս Դ. Գելցեր, Զամառոտ պատմություն հայոց (թարգմ. հ. Գր. Գալենքյարյանի), Վիեննա, 1897, էջ 23:  
 15 Տե՛ս Մ. Աբեդյան, Զայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1899, էջ 182-183:  
 16 Ս.Ս. Երեմյան, Ինչպես է ծագել «Արարատ» անունը, «Սովետական Զայաստան» օրաթերթ, 1968, փետրվարի 25, N 47 (14313):  
 17 Ս. Ս. Երեմյան, Զայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 39:  
 18 E.A.W. Budge und L.W. King, Annals of the Kings of Assiria (AKA). I, London, 1902, p. 278-279. col. I, lin. 70, 73-74.  
 19 АВИИУ, №23 (1, 69).

Նիբուր լեռը /GEN Ni-bur/ գտնվել է Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի և Քաթմուխի երկրի տարածքի շուրջը, որը ձգվել է Քաշիարի լեռների հյուսիսում:

Արարդի /Արրեդի/ լեռան վերաբերյալ տեղեկությունը պահպանվել է Աշշուրնաժիրասպալ II-ի հետևյալ տեքստում.

a-na <sup>KUR</sup>Kir-ru-ri <sup>KUR</sup>Si-me-ra <sup>URU</sup>Ul-ma-ni-a <sup>KUR</sup>A-da-uš <sup>KUR</sup>Har-ga-a-a <sup>KUR</sup>Har-ma-sa-a-a ...ma-da-ta-šu-nu am-hur ... ki-i ina <sup>KUR</sup>Kir-ru-ri uc-ba-ku-ni <sup>KUR</sup>Gil-za-na-a-a <sup>KUR</sup>Hub- uš-ka-a-a ... ma-da-tu-šu-nu ana <sup>KUR</sup>ni-rib ša <sup>URU</sup>Hu-lu-un ana <sup>KUR</sup>Hab-hi ša be-ta-ni etarab<sup>ab</sup> <sup>URU</sup>Ha-tu <sup>URU</sup>Ha-ta-ru <sup>URU</sup>Ni-iš-tu-un <sup>URU</sup>Ir-bi-di <sup>URU</sup>Met-qi-a <sup>URU</sup>Ar-ša-ma <sup>URU</sup>Te-e-la <sup>URU</sup>Ha-lu-a<sup>MEŠ</sup> -ni ša <sup>KUR</sup>Hab-hi ša ina bi-rit <sup>GEN</sup>A-ru-a <sup>GEN</sup>A-ra-ar-di (var. <sup>GEN</sup>A-ar-re-di) šadani<sup>MEŠ</sup> dannuti<sup>MEŠ</sup> šak-nu<sup>nu</sup> akšud dikta<sup>MEŠ</sup> -šu-nu ma ‘atta<sup>MEŠ</sup> a-duk<sup>20</sup>

«Մտա Քիրրուրի երկիրը, տուրքը Քիրրուրի երկրի, Սիմեսի երկրի, Սիմերա երկրի, Ուվանիա քաղաքի, Ադաուշ երկրի, խարգայացիների, խարմասացիների ... տուրքը նրանց ընդունեցի... Երբ ես գտնվում էի Քիրրուրի երկրում, զիլգանացիները, խուրուշպացիները... ինձ բերեցին տուրքը: Ես դուրս ելա Քիրրուրի երկրից, Խուլուն քաղաքի լեռնանցքով մտա Խաբխի երկիրը, որը ցածրադիր է: Խաբխի երկրի Խաթու, Խաթարու, Նիշթուն, Իրբիդի, Մեթկիա, Արծանիա, Թելա, Խալուա բնակավայրերը, որոնք տարածված էին Ուսու, Արուա, Արարդի (տարբերակ՝ Արրեդի) հսկա լեռների միջև, խոնարհեցի, կազմակերպեցի նրանց մեծ ջարդը»<sup>21</sup>:

Ակներև է, որ Արարդի – <sup>GEN</sup> A-ra-ar-di (տարբերակ՝ Արրեդի - <sup>GEN</sup> A-ar-re-di) լեռը գտնվել է Խաբխի երկրում, որը սահմանակից է եղել Քիրրուրի երկրին: Իսկ Քիրրուրի երկրի տեղադրության առիթով Ի. Մ. Դ-յակոնովը գրում է. «Քիրրուրի-մարզ Մեծ Չաբի հովտում, նրա գալարի մոտ: Քիրրուրի լեռնանցքը ձգվել է Փոքր Չաբի վերին հոսանքից մինչև Մեծ Չաբի հովիտը»<sup>22</sup>:

Մատնանշված փաստերը հաստատում են, որ Նիբուր և Արարդի (տարբերակ՝ Արրեդի) լեռները գտնվել են միմյանցից հեռու, տարբեր տարածքներում: Եթե առաջինը գտնվել է Քաշիարի լեռների հյուսիսում, ապա երկրորդը՝ Մեծ և Փոքր Չաբերի միջև ձգվող տարածքի շուրջը, մասնավորապես «Մեծ Չաբի գալարի մոտ», Քիրրուրի երկրի տարածքի հետ կապված, որն Ուրարտուի կազմում չի եղել: Ակներև է, որ սեպագիր փաստերը, ինչպես ընդգծվեց վերևում, հերքում են այդ լեռների համադրության վերաբերյալ Ս. Երեմյանի վերոհիշյալ կարծիքը:

Այնուհետև, եթե Արարդի (Արրեդի) լեռը հիշատակվում է եզակի թվով, ապա Աստվածաշնչում Արարատ երկրի լեռները վկայված են հոգնակի թվով: Այս փաստը ոչ միայն կասկածի տակ է դնում, այլև մերժում է Արարդի (Արրեդի) լեռան համադրումը Աստվածաշնչի Արարատ երկրի լեռներին: Եվ վերջապես, հակառակ Ս. Երեմյանի կարծիքի, Արարդի (Արրեդի) լեռը գտնվել է Ուրարտուի սահմաններից դուրս և այն չէր կարող Աստվածաշնչում հանդես գալ Ուրարտուի լեռների փոխարեն: Իսկ Ուրարտուի սահմաններից դուրս գտնվող Արարդի (Արրեդի) լեռան անունը չէր կարող Ուրարտու անվան տարբերակը լինել:

Տասականկիր լեռան հարցով զբաղվող հետազոտողներից Գ. Սարգսյանն իր հետազոտությունների ընթացքում հետևելով Կորդվաց գավառի ժողովրդական ավանդություններին, այն կարծիքն է հայտնել, թե Նոյի տապանը հանգրվանել է Կորդվաց գավառի Արարդ լեռան վրա<sup>23</sup>: Մակայն, ինչպես ցույց տվեցին Կորդվաց

20 AKA, I, p. 272-275, col. I, lin. 54-61.

21 АВИИУ, №23 (I, 54, 56, 58).

22 АВИИУ, №27, прим. 18.

23 Տե՛ս Գ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները. -

«Պատմա-բանասիրական հանդես», 1992, №2-3, էջ 36, ծանոթ. 24:

գավառի հետ կապված վերոհիշյալ փաստերը, այդ գավառում Արարդ անունով լեռ գոյություն չի ունեցել: Այդ գավառի ավանդություններում հիշատակվում է Սարարադ լեռան անունը, բայց դա էլ հորինվել է Աստվածաշնչի ջրհեղեղի ավանդությունում վկայված Արարատ երկրի անվան աղավաղումից:

Հայկական այլ գավառների բնակիչները, ինչպես նաև օտար ժողովուրդները իրենց ավանդություններում փորձել են տապանակիր լեռը ներկայացնել ըստ գիտական հիմքի: Օտար ժողովուրդների հյուսած ավանդություններից մեկը, որը հասել էր Նիկողայոս Գամասկացուն (մ.թ.ա. I դ.), պահպանվել է Հովսեփոս Փլավիոսի աշխատություններում: Այդ ավանդությունում տապանակիր լեռը ցույց տալու համար որպես գիտական հիմք ներկայացվում է նրա «մեծ» հատկանիշը. «Մինիասից վերև Արմենիայում կա մի մեծ լեռ Բարիս անունով, որտեղ, պատմության համաձայն, շատերը ապաստանելով փրկություն են գտել ջրհեղեղի ժամանակ, իսկ մեկը տապանի վրա տարվելով, իջել է գագաթին, և տախտակների մնացորդները երկար ժամանակ պահպանվել են: Մա հավանաբար այն մարդն է, որի մասին գրել է Մովսեսը՝ հրեաների օրենսդիրը»<sup>24</sup>: Ի դեպ, Մ. Ֆրիդրիխը նույնացնում է Բարիս և Մասիս լեռները<sup>25</sup>:

Իհարկե, տարօրինակ ոչինչ չկա, որ օտար ժողովուրդներից մեկը Մասիս լեռը անվանել է Բարիս անունով: Այս կապակցությամբ ուշագրավ է, որ արաբական ավանդություններում Մասիսը, որը դիտվել է ոչ միայն Հայաստանի, այլև մահմեդական աշխարհի ամենաբարձր լեռը, և որի վրա գտնվում են հայոց քաղաքների շիրիմները իրենց գանձերով, կոչվել է Հարիս անունով<sup>26</sup>:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ հույն պատմագիր Պլուտարքոսի (40-127) աշխատություններում պահպանված մի ավանդությունում Մասիս լեռը, որը գտնվել է Արաքս (Երասխ) գետի ափին և համարվել է դիցաբանական լեռ, կոչվել է Տիորփոս անունով<sup>27</sup>: Մա նշանակում է, որ տարբեր ժողովուրդներ Մասիսին տվել են տարբեր անուններ: Այս փաստերը խոսում են Մ. Ֆրիդրիխի կողմից Բարիս լեռը Մասիսին համադրելու՝ վերևում արտահայտած կարծիքի օգտին, այսինքն՝ Բարիս անունը օտարների կողմից Մասիսին տրված անվանումներից մեկն է: Այստեղ կարևոր է նաև այն, որ դեռևս Նիկողայոս Գամասկացու ժամանակից Մասիսը դիտվել է որպես տապանակիր լեռ: Ուշագրավ է նաև այն, որ Նիկողայոս Գամասկացուն հասած ավանդությունում այդ լեռը հիշատակվում է «մեծ», իսկ արաբական ավանդություններում՝ «ամենաբարձր» անվանումներով:

Հայկական այլ գավառների բնակիչների հյուսած ավանդություններից մեկում, որը պահպանվել է Հովսեփոս Փլավիոսի աշխատությունում, տապանակիր լեռ է համարվում Մասիսը. «Այնուհետև, երբ տապանը կանգ առավ Արմենիայում գտնվող մի լեռան վրա... Նոքոսն էլ իր գերդաստանով դուրս գալով, աստծուն զոհեր մատուցեց և խնջույք արեց ընտանիքի անդամների հետ: Արմենները մինչև օրս այդ վայրը կոչում են իջնելու տեղ, քանի որ այնտեղ է փրկվել տապանը, և մինչև օրս այդ վայրում ցույց են տալիս դրա բեկորները»<sup>28</sup>: Ավանդությունում ընդգծված «իջնելու տեղ» արտահայտությունը վերաբերում է Նախիջևանին, որի

24 J. Flavius, նշվ. աշխ., էջ 20 (95) Հովսեփոս Փլավիոս, նշվ. աշխ., էջ 55 (99):

25 St u M. Friedrich, նշվ. աշխ., էջ 49:

26 St u Bibliotheca Geographorum Arabicorum, vol. III, Leiden, 1967, p. 380.

27 St u Plutarch die fluvius (praefatio), Lipsia, 1981, S. 27-28 (հմմտ. Ղ. Ալիշան, Հին հասարակարհի հեթանոսական կրոնը հայոց, Վենետիկ, 1985, էջ 35-36, 79):

28 J. Flavius, նշվ. աշխ., էջ 20 (90-92): Հովսեփոս Փլավիոս, նշվ. աշխ., էջ 554 (90-92):

մոտ է գտնվել Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռը՝ Մասիսը: Մա նշանակում է, որ սույն ավանդությունում էլ հայ ժողովուրդը փորձ է արել «իջնելու տեղ» արտահայտության հիմքով հաստատել, թե Նախիջևանի մոտ գտնվող Մասիսն է եղել այն լեռը, ուր հանգրվանել է Նոյի տապանը:

Հայ ժողովրդի հյուսած մեկ այլ ավանդությունում, որը տեղ է գտել Ղ. Ալիշանի աշխատությունում և հավանաբար հյուսվել է Աստվածաշնչի հայերեն լեզվով թարգմանվելուց հետո, դարձյալ որպես տապանակիր լեռ է դիտվել Մասիսը: Ավանդությունում այն տեղեկությունն է հաղորդվում, թե համաշխարհային ջրհեղեղի ժամանակ Նոյի տապանը նախ՝ հանդիպել է Վանա լճի ափին գտնվող Գրգուռ լեռանը, ապա նրա խորհրդով վերջնականապես հանգրվանել իրենից բարձր Մասիս լեռան կատարին. «Ջրոց նուազելու ատեն Տապանին տատանելով հածիլն լեռն ի լեռ, հանգստյան հարմար դիրք մը գտնելու, և գալով այս շատ անգամ հիշված Աղթամարա ծովուն կողմերը, անոր հիմա ծանոթ մի ըսել.

«Գրգուռ, ընկալ գիս. և ասոր պատասխանն՝

Գնա ի Մասիս,

Ձի բարձր է քան գիս»<sup>29</sup>:

Ակներև է, որ Մասիս լեռան շուրջ հյուսած իր այս ավանդությունում հայ ժողովուրդը դարձյալ փորձել է տապանակիր լեռան հարցը լուծել գիտական հիմքով: Այստեղ որպես հիմք է ներկայացվում տապանակիր լեռան «բարձր» հատկանիշը, որպիսին ունի Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթը՝ Մասիս լեռը:

Ուշագրավ է, որ այդ լեռը Մասիս անվանը զուգահեռ կրում է նաև Արարատ անունը: Այն հարցին, թե երբվանի՞ց է լեռը Մասիս անվանը զուգահեռ կրել Արարատ անունը, դժվար է պատասխանել: Մակայն հայտնի է, որ լեռը Մասիս անունով է կոչվել թե՛ Խորենացու «Հայոց պատմություն»-ում<sup>30</sup> և թե՛ «Աշխարհացույցում»<sup>31</sup>: Այն միայն Մասիս անունով է կոչվել նաև հայկական վերոհիշյալ ավանդություններում: Ուստի՝ ինչպես երևում է, լեռը ավելի ուշ ժամանակաշրջանից է կրել Արարատ զուգահեռ անվանումը՝ Խորենացու ապրած ժամանակաշրջանից և «Աշխարհացույցի» գրվելու ժամանակաշրջանից էլ ավելի ուշ: Աստվածաշնչի ջրհեղեղի ավանդության ազդեցության տակ Մասիս լեռանը Արարատ անունը տվել է հայ ժողովրդի հատվածներից մեկը՝ հետագա ժամանակաշրջանում, երբ փորձել է որոշել, թե որն է եղել տապանակիր լեռը՝ Աստվածաշնչի լեզենդում հիշատակված Արարատ կամ Ուրարտու (հմմտ. Արմենիա) երկրի անունը սխալմամբ դիտելով որպես տապանակիր լեռան անուն:

Տապանակիր լեռան հարցով զբաղվող հետազոտողներից Հ. Կիսպերտը<sup>32</sup> և Մ. Ֆրիդրիխը<sup>33</sup> իրենց հետազոտությունների ընթացքում հետևել են Մասիս լեռան հետ կապված ավանդություններին և տապանակիր լեռ են համարել Մասիսը: Ինչպես նշված ավանդությունները ստեղծող հայ ժողովուրդը, այնպես էլ դրանց հետևող այս հետազոտողները, անշուշտ, իրավացի են, քանի որ Մասիսը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթն է, որի վրա մարդիկ, ապաստան գտնելով, կարող էին ավելի հուսալիորեն պաշտպանվել համաշխարհային ջրհեղեղի կործանումից:

29 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 63:

30 Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, գիրք I, Եր., 1961, էջ 103.

31 Տե՛ս Մ. Տ. Երենյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 111:

32 Տե՛ս H. Kiepert, Lehrbuch der alten Geographic, Berlin, 1877, S. 75.

33 Տե՛ս M. Friedrich, նշվ. աշխ., էջ 49:



Այսպիսով, ըստ Աստվածաշնչում հիշատակված ջրհեղեղի լեգենդի՝ Նոյի տապանը հանգրվանել է Արարատ երկրի լեռների վրա: Ըստ սեպագիր արձանագրությունների՝ Արարատ երկիրը համապատասխանում է Ուրարտու կամ Արմենիա երկրին: Փաստորեն՝ Աստվածաշնչի լեգենդում հիշատակվում է, որ Նոյի տապանը հանգրվանել է Արմենիա, այսինքն՝ Ուրարտու կամ Արարատ երկրի ընդհանրապես վերցրած լեռների վրա, այլ ոչ թե այդ երկրի մի լեռան վրա, ինչպես մինչ օրս կարծել են հետազոտողները:

Աստվածաշնչում հիշատակված լեռները, որոնց վրա համաշխարհային ջրհեղեղի ժամանակ հանգրվան է գտել Նոյի տապանը, սեմական ծագում ունեցող լեզուներով կոչվել են Ուրարտուի լեռներ, իսկ հնդեվրոպական և հնդիրանական ծագում ունեցող լեզուներով՝ Արմենիայի լեռներ: Փաստորեն, ըստ Աստվածաշնչի ավանդության՝ Ուրարտուն և Արմենիան ի սկզբանե նույնն են: Դրանց տարբերությունը պետք է որոնել այն լեզուների տարբերության մեջ, որոնցով դրանք ավանդվել են:

Ինչպես հայ, այնպես էլ օտար ժողովուրդների կողմից գիտական հիմքի վրա ստեղծված ավանդությունները հաստատում են, որ Աստվածաշնչում հիշատակված ջրհեղեղի ժամանակ տապանակիր լեռը եղել է Ուրարտու-Արմենիա երկրի ամենաբարձր գագաթը՝ Մասիսը, որի վրա հանգրվանելով՝ Նոյի տապանը փրկել է մարդկային ցեղը ջրհեղեղի կործանումից:

## Summary

### THE BIBLICAL “MOUNTAINS ARARAT” ACCORDING TO CUNEIFORM INSCRIPTIONS

Dimitry N. Sargsyan

In the Hebraic manuscript of the Bible the mountains, upon which Noah’s Ark rested, were situated in the country whose name was written with the ‘RR’T consonantal root. This is in accordance with the Country Urartu mentioned in Assyrian cuneiform inscriptions. That Country Urartu was called Armina in Persian and Elamitic cuneiform inscriptions, and in the Latin translation of Indo-European origin of the Bible, it was called Armenia. The Greek translators of the Bible added the first letter ‘a’ of their alphabet to the consonant of the ‘RR’T consonantal root and got the Ararat country name. In fact, the mountains upon which Noah’s Ark rested were situated in Urartu-Armenia-Ararat country. But the Armenians were curious to know which was the mountain where Noah’s Ark rested in that country. The Armenians of the different provinces of Urartu-Armenia-Ararat country composed different traditions; in this way they tried to show that the mountain upon which Noah’s Ark rested was situated in their province. In the traditions composed by the inhabitants of the Province Kordvats that mountain was Judi-Dagh. Pavstos Buzand, S. T. Yeremyan and G. Sargsyan followed that opinion. But in the traditions of the inhabitants of most of the provinces, Masis is considered to be that mountain because Masis was the highest mountain of the Country Urartu-Armenia-Ararat upon which rested Noah’s Ark and saved human race from the great flood. In later eras, after the V-VII centuries, Armenians influenced by the aforementioned names of their country, also called the mountain Masis in the name of Ararat, which carries the meaning of Urartu, as well as, is equivalent to the name, Armenia.